ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2025թ. № 203

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի թիվ 84 որոշմանը կից ցուցակում Գառնիկ Սամվելի Բաղալյանի (ծնված՝ 01.03.1963թ.) անունը սխալմամբ գրվել է «Նորիկ», իսկ հայրանունը չի գրվել, հիմք ընդունելով Նորիկ Մկրտչի Բաղալյանի որդու՝ Միեր Նորիկի Բաղալյանի, հարևաններ Ավետիք Շալիկոյի Բաղալյանի և Կառլեն Արսենի Մահինյանի հայտարարությունները, Գառնիկ Սամվելի Բաղալյանի անձնագրային տվյալները և Գառնիկ Սամվելի Բաղալյանի ներկայացուցիչ Մելքոն Պետրոսի Ժամկոչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Շահումյան, Տեր Սիմոնյան, Մուրացան, Շիրակի խճուղի, Երևանյան խճուղի, Գործարանային, Ս. Ավետիսյան, Ալ. Մանուկյան, Ս. Ոփյան, Ե. Չարենց և Տաշիր փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 84 որոշմանը կից ցուցակի 120-րդ տողում գրված «Նորիկ Բաղալյան» բառերը փոխարինել «Գառնիկ Բաղալյան Սամվելի» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2025թ. մարտի 12
ք. Սպիտակ